

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱԲԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ИНОСТРАННЫЕ ЯЗЫКИ В ВЫСШЕЙ ШКОЛЕ
FOREIGN LANGUAGES IN HIGHER EDUCATION**

Գիտական հանդես
Научный журнал
Scientific Journal



2 (19)

Երևան – 2015

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Вестник издается по решению Ученого совета ЕГУ
The Bulletin is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ ր.գ.դ., պրոֆ. Երզնկյան Ե.Լ.

Խմբագրական խորհուրդ.

ր.գ.դ., պրոֆ. Գասպարյան Ս.Բ., ր.գ.դ., պրոֆ. Գաբրիելյան Յու.Ս., ր.գ.դ., պրոֆ. Մակարյան Ա.Ա., ր.գ.դ., պրոֆ. Պարոնյան Շ.Հ., ր.գ.դ., դոց. Մինոնյան Ա.Ա., ր.գ.դ., դոց. Առաքելյան Ա.Հ., ր.գ.թ., դոց. Բաղդասարյան Հ.Գ., մ.գ.թ., դոց. Կարապետյան Կ.Ս., մ.գ.թ., դոց. Հարությունյան Ջ.Հ., դոց. Թովմասյան Ն.Ս. (պատասխանատու քարտուղար):

Главный редактор: д.ф.н., проф. Ерзинкян Е.Л.

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Гаспарян С.К., д.ф.н., проф. Габриелян Ю.М., д.ф.н., проф. Макарян А.А., д.ф.н., проф. Паронян Ш.А., д.ф.н., доц. Симонян А.А., д.ф.н., доц. Аракелян А.Г., к.ф.н., доц. Багдасарян А.Г., к.п.н., доц. Карапетян К.М., к.п.н., доц. Арутюнян З.Г., доц. Товмасын Н.М. (ответ. секретарь).

Editor-in-chief: Doctor in Philology, Prof. Yerznkyan Y.L.

Editorial Board:

Doctor in Philology, Prof. Gasparyan S.K., Doctor in Philology, Prof. Gabrielyan Y.M., Doctor in Philology, Prof. Makaryan A.A., Doctor in Philology, Prof. Paronyan Sh.H., Doctor in Philology, Associate Prof. Simonyan A.A., Doctor in Philology, Associate Prof. Arakelyan A.H., PhD, Associate Prof. Baghdasaryan H.G., PhD, Associate Prof. Karapetyan K.M., PhD, Associate Prof. Harutyunyan Z.H., Associate Prof. Tovmasyan N.M. (Executive Secretary).

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հաղեսն ընդգրկված է ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի ամսագրերի ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի ցանկում:

Научный журнал «Иностранные языки в высшей школе» включен в список периодических изданий, допущенных Высшей аттестационной комиссией РА для публикации результатов диссертационных работ.

Scientific journal "Foreign Languages in Higher Education" is included in the list of journals approved by RA Supreme Certifying Commission to publish the main findings of dissertations.

**Հոփսիմն ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Բեյլա ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**
Երևանի պետական համալսարան

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

Օտար լեզվի ուսուցումը ակտիվ և բարդ գործընթաց է, որի վրա ազդում են տարբեր արտալեզվական գործոններ: Սույն հոդվածում արտալեզվական գործոնների շարքում դիտարկվում են մոտիվացիան, տարիքը, հիշողությունը, մշակութային իրազեկությունը և գեղարվեստական գրականություն կարդալը, որոնք մեծ դեր են խաղում օտար լեզուներ յուրացնելու ընթացքում: Հոդվածում քննարկվող օրինակները ցույց են տալիս, թե ինչպես կարելի է ուսանողների մոտ առաջացնել մոտիվացիա և մշակութային իրազեկություն և հասնել օտար լեզվի իմացության՝ գրականություն կարդալու միջոցով:

Բանալի բառեր. *արտալեզվական գործոններ, մշակութային իրազեկություն, հաղորդակցության գործառույթ, մոտիվացիա, հաղորդակցություն, օտար լեզվի ուսուցման գործընթաց*

Օտար լեզվի ուսուցման գործընթացի վրա մեծ ազդեցություն ունեն արտալեզվական գործոնները՝ սովորողի տարիքը, հիշողությունը, լեզվական ինտուիցիան, կրթական մակարդակը, կենտրոնացումը, մոտիվացիան, մշակութային իրազեկությունը, շրջապատող միջավայրը, համբերատարությունը, աշխատասիրությունը, ուսուցչի դերը, հոգեբանական գործոնը և այլն: Սույն հոդվածում մենք կանդրադառնանք այնպիսի գործոնների, ինչպիսին են *տարիքը, հիշողությունը, մշակութային իրազեկությունը*, քանի որ գտնում ենք, որ վերոնշյալ գործոնները մեծ դեր են խաղում լեզու ուսումնասիրելու պրոցեսում: Ուսանողների մոտ ցանկություն, պահանջ, հետաքրքրություն և պատրաստակամություն (այլ կերպ ասած՝ մոտիվացիա) առաջ բերելու նպատակով դասավանդող ուսուցիչները (կամ դասախոսները) օգտագործում են տարբեր մեթոդներ և նյութեր, քանի որ օտար լեզու սովորողները ունեն տվյալ լեզուն յուրացնելու անհրաժեշտ տարբեր ունակություններ ու հմտություններ: Եթե անգամ սովորողները արտաբերում են բառեր, արտահայտություններ և նախադասություններ ճիշտ արտասանությամբ, առոգանության և շեշտի սխալները շատ տարածված երևույթ են: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ օտար լեզու սովորողները ընկալում են նյութը տարբեր ձևերով և տարբեր ժամանակահատվածում: Բավական կարճ ժամանակամիջոցում հաջողության հասնելու համար դասավանդող մասնագետները պետք է գիտակցեն, թե օտար լեզու ուսումնասիրողները ինչ են ուզում սովորել առաջնահերթ: Անհատի սովորելու ոճը այս կամ այն մեթոդին առաջնայնություն տալու ձևն է: Ոմանք սովորում են անգիր անելով, մյուսները՝ գրելով, երրորդ խումբը՝ պարզապես հիշելով և այլն: Երբ սովորելու

գործընթացը ընթանում է այն ձևով, որը առավել գերադասելի է լեզուն ուսումնասիրողի համար, կարճ ժամանակահատվածում կարելի է հասնել դրական արդյունքի: Ըստ լեզվաբանական հարաբերակցության սկզբունքի՝ լեզվակրի մոտ աշխարհի պատկերը ձևավորվում է տվյալ լեզվի քերականական և բառապաշարային դասակարգման միջոցով, այսինքն՝ օբյեկտիվ իրականության պատկերը տարբեր է տարբեր լեզվով խոսող մարդկանց մոտ, քանզի այդ տարբեր լեզվի քերականությունն ու բառապաշարը տարբեր ձևով է դասակարգում իրականության երևույթները /Sapir, 1921: 215/:

Ինչպես հայտնի է, լեզվի ամենակարևոր գործառույթներից մեկը *հաղորդակցվելու գործառույթն* է, և մեր օրերում անհրաժեշտ պայման է ուսանողների մոտ հաղորդակցական հմտությունների զարգացումը վերջնական մպատակին հասնելու համար, այն է՝ օտար լեզվի գերազանց իմացության:

Ժուռնալիստիկայի ֆակուլտետում մոտ քսանհինգ տարի դասավանդելու ընթացքում մեր կողմից մշակվել է հատուկ մոտեցում և մեթոդիկա տարբեր մակարդակների ուսանողների մոտ օտար լեզվի՝ հատկապես անգլերենի նկատմամբ հետաքրքրություն և լեզուն սովորելու մեծ ցանկություն առաջացնելու ուղղությամբ:

Օտար լեզու դասավանդող մասնագետները պետք է սովորողներին տրամադրեն լայն հնարավորություններ շփման համար՝ նրանց առաջարկելով թեմաներ, որոնք վերաբերում են թե՛ առօրյա կյանքին, թե՛ քաղաքականությանը, թե՛ տնտեսությանը, թե՛ իրենց մասնագիտությանը: Ուսանող-ուսանող, ուսանող-դասախոս կապը պետք է լինի ակտիվ և անմիջական՝ դիմացինին լսելու կարողությամբ և փոխըմբռնմամբ:

Հայաստանի տարբեր շրջաններում օտար լեզվի ուսուցման մակարդակը, դժբախտաբար, բավականին ցածր է, որի հետևանքով դիմորդներից շատերը չեն ունենում օտար լեզվի համապատասխան գիտելիքներ: Արդյունքում շատ ֆակուլտետներ ընդունելության քննությունների ցանկից հանել են օտար լեզվի քննությունը: Ուսանողները հաճախ հանդիպում են դժվարությունների, քանի որ կարճ ժամանակահատվածում մեծ ջանքերի գնով ստիպված են լինում հասնել լեզվի իմացության պատշաճ մակարդակի՝ քաջ գիտակցելով, որ մեր օրերում անհնար է լավ մասնագետ դառնալ առանց օտար լեզվի (մասնավորապես անգլերենի) իմացության: Օրինակ, լավ լրագրող դառնալու կարևոր նախապայմաններից մեկը օտար լեզվի գերազանց իմացությունն է, քանի որ լրագրողները հաճախ հարցազրույցներ են վարում ոչ միայն ազգությամբ հայ, այլև օտարազգի դիվանագետների, դեսպանների, հյուպատոսների կամ այլ անգլախոսների հետ: Շատ կարևոր է, որպեսզի լրագրողի անգլերենը լինի ոչ միայն գրագետ, այլ վարժ և շատ սահուն:

Դպրոցում ստացած օտար լեզվի ոչ բավարար գիտելիքները հետագայում խոչընդոտում են ուսանողին լեզուն յուրացնելու ճանապարհին /Niederhauser, 2012: 28/: Բուհ ընդունվելու համար դիմորդները ձեռք են բերում որոշ գիտելիքներ օտար լեզվի քերականությունից և բառապաշարից, որոնք, սակայն, բավարար չեն սահուն ձևով հաղորդակցվելու համար: Առաջին

կուրսի ուսանողներից շատերը գիտակցում են իրենց օտար լեզվի իմացության ցածր մակարդակը և միևնույն ժամանակ հասկանում այդ լեզվին տիրապետելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Դասընթացներին մասնակցելու ժամանակ նույն խմբում են հայտնվում օտար լեզվի տարբեր մակարդակներ ունեցող ուսանողներ, ինչը դժվարացնում է ուսումնական գործընթացը: Ոչ բավարար գիտելիքներ ունեցող ուսանողները կաշկանդվում են, ինչը վատ է անդրադառնում նրանց առաջընթացի վրա:

Մեր կարծիքով, այս հարցի հնարավոր լուծումը նրանց տարբեր խմբերի մեջ ընդգրկելն է՝ ըստ լեզվի իմացության մակարդակի:

Օտար լեզվի ուսումնասիրության մեջ հաջողության հասնելու հարցում որոշիչ դեր է կատարում տարիքը: Լեզվի ուսումնասիրությունն ավելի վաղ տարիքում սկսելը սովորողին լեզվի տիրապետման բարձր մակարդակի հասնելու հնարավորություն է ընձեռում: Մեծահասակների շրջանում տարածված է այն կարծրատիպը, որ մեծ տարիքում ոչ բոլորը կարող են ձեռք բերել օտար լեզվի իմացություն, կամ որ օտար լեզու սովորելու համար հատուկ լեզվական ունակություններ են անհրաժեշտ: Շատերի մոտ նոր լեզու ուսումնասիրելու հետ կապված բարդություներ են առաջանում, և նրանց թվում է, թե դրանք հաղթահարելն աստիճանաբար ավելի դժվար է դառնում: Մյուս կողմից, մեծ տարիքում օտար լեզու սովորողներն ավելի հստակ են պատկերացնում, թե ինչու է իրենց անհրաժեշտ օտար լեզվի իմացությունը, և սովորաբար նրանք ավելի հաստատակամ են հնարավորինս կարճ ժամանակամիջոցում լեզուն տիրապետելու հարցում:

Օտար լեզվով ելույթ ունենալը, հատկապես անգլալեզու լսարանի առջև, շատերի մոտ հուզմունք և լարվածություն է առաջացնում: Ծայրահեղ լարվածությունը երբեմն հանգեցնում է շփոթմունքի, որն էլ իր հերթին հիասթափության և լեզվի հետագա ուսումնասիրությունը շարունակելու պատճառ է դառնում: Ի տարբերություն երեխաների, մեծահասակներին մեծապես հետաքրքրում է շրջապատի կարծիքն իրենց լեզվի իմացության վերաբերյալ: Նրանք մեծ զգուշավորություն են ցուցաբերում լեզվական սխալներ կամ սայթաքումներ թույլ չտալու հարցում:

Ահա թե ինչու, օտար լեզվի դասավանդման պրոցեսում կարևոր է հաշվի առնել ուսանողների տարիքային գործոնը:

Լեզվի ուսումնասիրության գործում էական նշանակություն ունի նաև հիշողությունը:

Երբեմն ուսանողները կարծում են, որ եթե հասկացել են այն, ինչ լսել են կամ կարդացել, ապա նաև յուրացրել են այն: Հիշողության մեջ ամրապնդելու համար քայլեր չձեռնարկելը տարածված սխալ է: Հնարավոր է հիշել այն, ինչը մեկ անգամ լսել կամ կարդացել եք և ապա նաև հասկացել: Հիշելու առաջին մակարդակը ճանաչումն է: Որևէ տեղեկության կրկին առնչվելիս հեշտությամբ ճանաչում ենք այն: Երկրորդ մակարդակը հիշողությամբ վերարտադրումն է: Սա լսածը կամ կարդացածը ճշգրտությամբ վերարտադրելու կարողությունն է: Այս մակարդակին բնորոշ է տարբեր

տեղեկությունները միմյանց կապելը և այդ տեղեկությունները նոր ու տարբեր ձևերով կիրառելը:

Հիշելու արդյունավետությունը կախված է երկու գործոնից: Դրանք են՝ նոր տեղեկությունն արդեն ձևավորված գիտելիքին ավելացնելը և այդ գիտելիքի հաճախակի կիրառելը, ինչն էլ իրականացնում ենք օտար լեզվի դասավանդման գործընթացում:

Դրական կամ բացասական հույզերը նպաստում են որոշակի իրադարձություններ հիշելուն: Որևէ դեպքի հետ կապված հուզական ազդակները առաջացնում են դիպվածային հիշողություն: /Knight, 1993: 67/

Մշակույթն ու հաղորդակցությունն անբաժանելի են, քանի որ մշակույթով է պայմանավորված, թե ով է խոսում և ում հետ, ինչի մասին է խոսում, և թե ինչպես է ընթանում հաղորդակցական գործընթացը: Եվ, իհարկե, օտար լեզու սովորելու կարևոր գործոններից է նաև *մշակութային իրազեկությունը*, այն է՝ լեզվակիրների մշակույթի հետ ծանոթությունը: Ըստ մարդաբանների՝ մշակույթը մարդկանց մի խմբի կենսակերպն է, այն իր մեջ ընդգրկում է հասարակական գործունեություն, որ կապում է մի խումբ մարդկանց միմյանց և միաժամանակ տարբերակում է նրանց մյուսներից /Montgomery and Reid-Thomas, 1994: 5/:

Ըստ Ֆրանկի՝ երբ մենք օգտագործում ենք *մշակույթ* բառը, իհարկե, նկատի ունենք գրականություն, երաժշտություն և արվեստի մյուս տեսակների ամբողջությունը: Բայց չպետք է մոռանանք, որ յուրաքանչյուր ժողովրդի ուսեստները, տոները, տարագները, սովորույթները նույնպես կազմում են մշակույթի զգալի մասը, ինչպես նաև այդ ժողովրդի համար էական արժեհամակարգը, այս կամ այն հարցի շուրջ յուրօրինակ մոտեցումներն ու վերաբերմունքը /Frank, 2013: 3/:

Մեզ՝ անգլերենի մասնագետներիս համար, շատ կարևոր է հասկանալ, թե ինչպես անգլախոս երկրների մշակույթի մասին ունեցած մեր գիտելիքներն ու պատկերացումները կարելի է օգտագործել անգլերեն լեզու դասավանդելու ընթացքում /Frank, 2013: 2/:

Կրամշը նշում է, որ ուսուցչի պարտականությունն է սովորեցնել ուսանողներին հասկանալ, թե ինչու են տվյալ լեզուն կրողները խոսում հենց այդ ձևով, և թե ինչու են նրանք լռում /Kramersch, 1993: 245/

Միայն արտասանության, քերականության և բառապաշարին ուշադրություն դարձնելով երբեք չի կարելի խորությամբ ուսումնասիրել լեզուն: Դասավանդող մասնագետները պետք է զինված լինեն խորը և բազմակողմանի գիտելիքներով ուսանողների մոտ այդ երկրների մշակույթի, ու սովորույթների նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացնելու նպատակով:

Օրինակ՝ այդ բանին մեծապես նպաստում են ազգային տոներին նվիրված դասերը:

Գոհունակության տոնը (Thanksgiving) նշելիս ուսանողները ծանոթանում են տոնի ծագմանը, համեմատում այն բարեկենդանի տոնի հետ: Նրանց հանձնարարվում է նմանություններ, տարբերություններ կամ ընդհան-

րություններ գտնել, որի ընթացքում ուսանողները փութաջանորեն պրպտում են համացանցի տարբեր կայքերում և, բարեբախտաբար նաև գրքերում՝ փորձելով գտնել որքան հնարավոր է շատ ու հետաքրքիր փաստեր: Ակտիվ և արդյունավետ քննարկումներից հետո ուսանողները խոստովանում են, որ վերոնշյալ մթնոլորտը նպաստում է իրենց մոտ մեծ հետաքրքրություն առաջացնելուն, որը, մեր կարծիքով, *մոտիվացիոն* գործոն է անգլերենը խորությամբ ուսումնասիրելու համար:

Երբ ամեն տարի հոկտեմբերի 31-ին տոնվում է *Halloween* կոչվող տոնը, որոշ դասախոսներ իրենց ուսանողներին հանձնարարում են տեղեկություններ հավաքել այդ տոնի մասին և ելույթ ունենալ զեկուցումներով: Սա մեծ խանդավառություն և ոգևորություն է առաջացնում ուսանողների շրջանում:

Ուսանողներն անհամբերությամբ են սպասում են նաև Սուրբ Ծննդյան տոնին նվիրված դասերին, որոնց ընթացքում նրանք հնարավորություն են ստանում ծանոթանալու տարբեր երկրներում տոնին առնչվող ավանդույթներին, պատմություններին, սովորում են երգեր և բանաստեղծություններ: *Մշակութային իրազեկությունը* կարևոր է, որպեսզի մարդիկ հասկանան, թե ինչու մի երկրում կարելի է այս կամ այն բանն անել, իսկ մյուսում՝ ոչ, թե ինչու մի երկրում առաջնային են համարվում որոշ հատկանիշներ, իսկ մյուսում՝ ոչ: Օրինակ, մեզ՝ հայերիս համար, առաջնային են հավատարմությունը, հյուրասիրությունը, առատաձեռնությունը, հարգանքը մեծերի նկատմամբ, մինչդեռ, օրինակ, ամերիկացիները հակված են գնահատելու անկախությունը, ինքնավստահությունը, հավասարությունը և այլն: Երբ մենք սովորեցնում ենք օտար լեզու (մասնավորապես անգլերեն), սովորողները պետք է իմանան, թե ինչ անհարմար իրավիճակներում կարող են հայտնվել նրանք օտար երկիր ճանապարհորդելիս: Չէ՞ որ շատ հաճախ մեր հայրենակիցները մշակութային շոկ են ապրում, երբ, օրինակ, օտար երկրներում ամեն ոք վճարում է իր համար կամ էլ, ասենք, 1-2 րոպե ուշանալու դեպքում խիստ նկատողություն է ստանում վերադասից:

Մեր օրերում տարածված է այն կարծիքը, որ մարդիկ սկսել են քիչ կարդալ կամ, երբեմն էլ, ընդհանրապես չկարդալ *գեղարվեստական գրականություն*: Իհարկե, մասամբ դա այդպես է, բայց, հուրախություն մեզ, երբեմն կարելի է հանդիպել շատ կարդացած երիտասարդի, ում հետ շփումը միայն մեծ բավականություն և հաճույք է պատճառում: Կուզենայի նաև նշել, որ մենք՝ մեծերս, սիրում ենք համեմատել այսօրվա երիտասարդությանը մեզ հետ՝ մոռանալով, որ եթե նրանք էլ մեզ նման լինեին, առաջընթաց չէր լինի ընդհանրապես: Չէ՞ որ վերջին 20-30 տարիների ընթացքում աշխարհը թևակոխել է նոր դարաշրջան՝ բարձր տեխնոլոգիաների դարաշրջանը, և շատ բնական է, որ ժամանակակից երիտասարդները գերադասում են պրոգրեսիվ լինել՝ դրանով ցույց տալով, որ իրենք համընթաց քայլերով առաջ են գնում դարի պահանջներին:

Նախ ասենք, որ *գեղարվեստական գրականություն* կարդալն ամեն ոք հասկանում է յուրովի: Շատ հաճախ երիտասարդներին (և երբեմն էլ

դեռահասներին) ստիպում են կարդալ գեղարվեստական գրականություն, ինչը դրական արդյունքի փոխարեն հակառակ, բացասական ռեակցիա է առաջացնում: Երեխան սկսում է հաշվել գրքի էջերը և ծնողներին տեղեկացնել, թե քանի էջ է կարդացել, ասենք, մեկ ժամվա ընթացքում:

Մեր կարծիքով, պետության կողմից պետք է մշակվի հատուկ պարտադիր ծրագիր դպրոցում և ԲՈՒՀ-ում համաշխարհային և հայ գրականություն դասավանդելու համար: Հարկավոր է ստեղծել բանիմաց մասնագետների մի խումբ, որը կկարողանա հստակ որոշել, թե որ դասարանում երեխան ինչ գրականություն պետք է կարդա: Ընդ որում, մեր կարծիքով այդ խմբի մեջ պետք է ընդգրկվեն ոչ միայն ուսուցիչներ, դասախոսներ, մեթոդիստներ, այլև գրականագետներ ու արվեստի գործիչներ:

Օրինակ՝ առաջինից չորրորդ դասարաններում երեխան կարող է կարդալ հեքիաթներ (ընդ որում, ոչ միայն հայկական այլև արտասահմանյան հեղինակների): Չորրորդ դասարանից սկսած՝ երեխան կարող է սկսել կարդալ արկածային գրականություն (Մայն Ռիդ, Ստիվենսոն, Դանիել Դեֆո, Ժյուլ Վեռն և այլն):

Շատ կարևոր է զուգահեռներ անցկացնել տարբեր գրական գործերի միջև, նրանց միջև ընդհանրություններ և տարբերություններ գտնել: Օրինակ, երբ ուսանողին հանձնարարվում է տնային ընթերցանություն, դասախոսը, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, կարող է առաջարկել կարդալ Վիլյամ Սարոյանի «Մարդկային կատակերգությունը» կամ էլ, օրինակ, Սելինջերի «Տարեկանի արտում, անդունդի եզրին» ստեղծագործությունները:

Մեր կարծիքով, *գրականությունը* կարող է ոչ միայն կրթել, այլ նաև հայրենասեր սերունդ դաստիարակել, որը հստակ կպատկերացնի մեր ժողովրդի տեղն ու դերը ոչ միայն համաշխարհային գրականության, այլև համաշխարհային քաղաքակրթության համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Peter M. Responses to English for Specific Purposes. California: San Jose State University, 1998.
2. Theodore O. K. Study Strategies for Careers. Boston, 1993.
3. Linda K. L. ASAP – Academic Skills Achievement Program. Boston, 1994.
4. Montgomery M., Raid-Thomas H. Language and Social Life, British Council, 1994.
5. Frank J. Raising Cultural Awareness in the English Language Classroom // *Forum*, N 4, 2013.
6. Niederhauser J. S. Motivating Learners at South Korean Universities // *Forum*, N 3, 2012.
7. Sapir E. An Introduction to the Study of Speech, Boston, 1921.
8. Kramsch C. Context and Culture in Language Teaching. Oxford: OUP 1993.

Р. НИКОГОСЯН, Б. САРУХАНИЯН – Роль культурной грамотности в процессе преподавания иностранного языка. – Преподавание иностранного языка – активный и всеобъемлющий процесс. Данная статья посвящена некоторым аспектам преподавания английского языка. В числе различных экстралингвистических факторов рассматриваются мотивация и культурная грамотность, которые играют большую роль в общении людей, изучающих английский язык. В статье приводятся примеры того, как можно стимулировать мотивацию и повышать культурную грамотность у студентов, изучающих английский язык.

Ключевые слова: экстралингвистические факторы, культурная осведомленность, функция общения, мотивация, коммуникация, процесс обучения иностранному языку

H. NIKOGHOSYAN, B. SARUKHANYAN – The Role of Cultural Awareness in Foreign Language Teaching. – Foreign language learning is an active and complex process of acquiring knowledge and skills. There exist a number of extralinguistic factors affecting language learning. This paper touches upon factors as motivation, age, memory, cultural awareness and reading fiction as nowadays they play a great role in the communication process.

Key words: extralinguistic factors, cultural awareness, communicative function, motivation, communication, foreign language learning/teaching process

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/Лингвистика/Linguistics

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ս., ԲԱԳՈՒՄՅԱՆ Լ. Քենեթ Գրեհեմի «Քամին ուռիների մեջ» ստեղծագործության շրջադասությունները (ինվերսիան) և դրանց հայերեն թարգմանության խնդիրը	3
ГАБРИЕЛЯН С., БАГУМЯН Л. Стилистическая инверсия в произведении Кеннета Грэма «Ветер в ивах» и проблема его перевода на армянский язык	
GABRIELYAN S., BAGUMYAN L. Stylistic inversion in Kenneth Grahame's "The Wind in the Willows" and the problem of its translation	
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Համընդհանուր դարձվածային միավորների լեզվամշակութային, թարգմանական տարբերակները և դրանց հոգևոր իմաստները	11
ГРИГОРЯН А. Лингвокультурные, переводческие варианты универсальных фразеологических единиц и их духовные значения	
GRIGORYAN A. Linguocultural, translational options of universal phraseological units and their spiritual meanings	
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ք., ԹՈՎԱՍՍՅԱՆ Լ. Համակարգչային եզրերի համարժեքների ստեղծումը և համակարգչային եզրաբանության զուգաձևությունների վերացման եղանակները հայերենում	18
ГРИГОРЯН К., ТОВМАСЯН Л. Методы создания компьютерных терминов на армянском языке и способы исключения терминов-эквивалентов	
GRIGORYAN Ch., TOVMASYAN L. The creation of computer terms in the Armenian language and means for eliminating term variations	
ԵՐԶՆԿՅԱՆ Ե., ԳԱԶԱՐՅԱՆ Լ. Տաբու բառերը որպես հուզաստատկական բառերի առաջացման աղբյուր-դաշտ	30
ЕРЗИНКЯН Е., ГАЗАРЯН Л. Табу как источники возникновения эмоционально-усилительных интенсификаторов	
YERZINKYAN Y., GHAZARYAN L. Taboo words as a source domain for the development of intensifiers	
ԽԱՐԱԶՅԱՆ Հ. Սոցիալական գովազդը որպես հասարակական գիտակցության ձևավորման միջոց	36
ХАРАЗЯН Е. Социальная реклама как средство формирования социального сознания	
KHARAZYAN H. Public advertising as a means of developing social awareness	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ. Ժամանակի նշույթավորումը տնտեսական իրադարձություններում	42
АРУТЮНЯН Л. Темпоральная маркированность экономических событий	
HARUTYUNYAN L. Temporal markers of economic events	
ՍԵԼԻԶ-ԱԴԱՄՅԱՆ Շ. Անգլերենում գայրույթ հույզի որոշ իմաստային յուրահատկությունների մասին	53
МЕЛИК-АДАМЯН Ш. О некоторых семантических особенностях эмоции «злость» в английском языке	

MELIK-ADAMYAN SH. Some Semantic Peculiarities of the Emotion “Anger” in English ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ Ս. Համատեքստը՝ որպես նույնարանական ասույթների ապա- կողմավորման միջոց	61
MECPOПЯH A. O контекстуальной обусловленности декодирования тавто- логических высказываний MESROPYAN A. Context as the key to the calculation of tautologies	
ՄՈՎՍԻՍՅԱՆ Տ. Ուղղաձիգ համատեքստը որպես լեզվարանական ուսում- նասիրության առարկա	74
МОВСИСЯН Т. Вертикальный контекст как объект лингвистического анализа MOVSISYAN T. Vertical context as a subject of linguistic study	
ГАЛУСТЯН А. Когнитивные основы развития причинного значения в семантике первообразных предлогов	80
ԳԱԼՍՏՅԱՆ Հ. Պարզ կապերի պատճառական իմաստի զարգացման ճանաչողական (կոգնիտիվ) նախադրյալները GALUSTYAN H. Cognitive aspects of developing causative meaning in simple prepositions	
ГЕВОРГЯН К. Человеческая телесность в современной лингвистике: соматизмы в языке и культуре	88
ԳԵՎՈՐԳՅԱՆ Զ. Մարդկային մարմինը ժամանակակից լեզվաբանության մեջ. սոմատիկ հասկացությունները լեզվում և մշակույթում GEVORGYAN K. Human body in modern linguistics: somatisms in language and culture	
СИМОНЯН А. Искренность в политической коммуникации через призму теории речевых актов	97
ՍԻՄՈՆՅԱՆ Ա. Անկեղծությունը քաղաքական խոսույթում SIMONYAN A. Sincerity and the speech acts used by the politicians	
ՄԵԹՈԴԻԿԱ/Методика/ Methodology	
НОВАКИМЯН L. TED Talks as a tool for enhancing listening comprehension	102
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Լ. TED դասախոսությունները որպես լսել-ընկալելու հմտու- թյունները զարգացնելու միջոց ОВАКИМЯН Л. TED лекции как средство развития навыков аудирования	
TOVMASYAN N., GHAZARYAN R. A plan of a film-based lesson for EFL students of intermediate level	112
ԹՈՎԱՍՏՅԱՆ Ն., ԳԱԶԱՐՅԱՆ Ռ. Ֆիլմ-դասի ծրագիր անգլերենը որպես օտար լեզու դասընթացի համար ТОВМАСЯН Н., КАЗАРЯН Р. К вопросу об использовании кино- и видео- материалов при обучении английского как иностранного	
ԱՄԻՐՅԱՆ Ա. Ինտերակտիվ դասերի կազմակերպումը որպես մասնագիտա- կան նյութն օտար լեզվով առավել արդյունավետ յուրացնելու միջոց	119
АМИРЯН А. Организация интерактивных занятий как способ продуктивного усвоения профессионального материала AMIRYAN A. The organization of interactive lessons as a productive means of assimilation of the professional material	

ԱՐՄԵՆՅԱՆ Լ. Իսպաներեն դարձվածքային միավորների ուսուցման ազգամշակութային հայեցակերպը լեզվական բուհում	126
АРСЕНЯН Л. Национально-культурный аспект обучения фразеологических единиц испанского языка в языковом вузе	
ARSENYAN L. National-cultural aspect of learning Spanish phraseological units in a linguistic university	
ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Հ. Հաղորդակցական մեթոդի դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման խնդրում	136
БАГДАСАРЯН А. Роль коммуникативного метода в преподавании испанского языка как иностранного	
BAGHDASARYAN H. The role of communicative method in teaching Spanish as a foreign language	
ԲԱՐՍԵԳՅԱՆ Լ. Օտար լեզվի դասավանդման մեջ երաժշտությունն ինտեգրելու որոշ առավելությունների մասին	144
БАРСЕГЯН Л. О некоторых преимуществах интегрирования музыки в преподавании иностранного языка	
BARSEGHYAN L. On some advantages of integrating music into foreign language teaching	
ՀԱՅԹՅԱՆ Լ. Ընթերցման միջոցով տեքստը ըմբռնելու ռազմավարությունների մասին.....	151
АЙТЯН Л. О стратегиях восприятия текста при чтении	
HAÏTYAN L. On reading comprehension strategies	
ՆԻԿՈԳՈՍՅԱՆ Հ., ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Բ. Մշակութային իրազեկության դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում	158
НИКОГОСЯН Р., САРУХАНИЯН Б. Роль культурной грамотности в процессе преподавания иностранного языка	
NIKOGHOSYAN H., SARUKHANYAN B. The role of cultural awareness in foreign language teaching	
ՉԱԼԱԲՅԱՆ Ս., ԳԱԶԱՐՅԱՆ Լ. Ուսանողակենտրոն ուսուցման կարևորությունն օտար լեզուն հատուկ նպատակների համար դասընթացում	165
ЧАЛАБЯН С., КАЗАРЯН Л. О важности лично-ориентированного обучения иностранному языку для специальных целей	
CHALABYAN S., GHAZARYAN L. The importance of learner-centered approach to teaching foreign languages for specific purposes	
БАГДАСАРЯН М., КОЧАРЯН С. К вопросу о преподавании иностранных языков в вузовской системе Армении	170
ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ Մ., ՔՈՉԱՐՅԱՆ Ս. Հայաստանի բուհական համակարգում օտար լեզուների դասավանդման հարցի շուրջ	
BAGHDASARYAN M., KOCHARYAN S. On the issue of teaching foreign languages in higher education establishments of Armenia	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/Литературоведение/ Literary Criticism

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. Ֆրանց Կաֆկայի «Օրագրերի» կառուցվածքը	178
АРАКЕЛЯН А. Структура «Дневников» Фр. Кафки	
ARAKELYAN A. The structure of Franz Kafka’s “Dairies”	
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Վ. Ամերիկյան «բիթնիկական շարժման» ազդեցությունը Չ. Բուկովսկու գեղարվեստական արձակի վրա	183
ХАЧАТУРЯН В. Формирование художественного мира Чарльза Буковского и американское «битническое движение»	
KNACHATURYAN V. Development of Charles Bukowski’s literary outlook and the American “beat movement”	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վ. Դ.Հ. Լոուրենսի՝ «արյան գիտակցության» ըմբռնումը....	189
ОГАННЕСЯН В. Восприятие «сознания крови» у Д. Г. Лоуренса	
HOVHANNISYAN V. D.H. Lawrence’s perception on “blood-consciousness”	
ՍԱԿԱՐՅԱՆ Ա. Կառլո Գոլդոնի և Հակոբ Պարոնյան («Երկու տիրոջ ծառան» նույնանուն պիեսների համեմատական վերլուծություն).....	196
МАКАРЯН А. Карло Гольдони и Акоп Паронян (сопоставительный анализ одноименных пьес под названием «Слуга двух господ»)	
MAKARYAN A. Carlo Goldoni and Hakob Paronyan (comparative analysis of the namesake plays “The Servant of Two Masters”)	
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ր. Փիլիսոփայական վեպի կառուցման սկզբունքներն ու առանձնահատկություններն ըստ Միգել դե Ունամունոյի	209
ПЕТРОСЯН Р. Принципы и особенности построения философского романа по Мигелю де Унамуну	
PETROSYAN R. The principles and features of the construction of philosophical novel according to Miguel de Unamuno	
Տեղեկություններ հեղինակների մասին	217
Сведения об авторах	
Information on the contributors	

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով, մեկ տպագիր օրինակով համակարգչային շարվածքով (**Microsoft Word 97-2003 ծրագրով, Times Armenian, Times New Roman** տառատեսակներով): Հոդվածի հետ անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի էլեկտրոնային տարբերակը մագնիսական կրիչով:

Հոդվածը պետք է ունենա հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր՝ 50-60 բառի սահմաններում, բանալի-բառեր, հեղինակի մասին համառոտ տեղեկություն:

Հոդվածի առաջին էջի վերին տողի աջ անկյունում 12 pt տառաչափով, թավ (Bold) գրվում է հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը (ազգանունը՝ գլխատառերով, օրինակ՝ **Արմինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**), շեղատառ (Italic) բոլոր կամ գիտահետազոտական կենտրոնի անվանումը, գլխատառերով, թավ (Bold) հոդվածի վերնագիրը:

Հոդվածում օգտագործված գրականության հղումները տրվում են փակագծերում. նշվում են հեղինակի ազգանունը, տպագրման տարեթիվը և համապատասխան էջերը, օրինակ՝ /Payne, 2000: 168-170/: Գրականության ցանկը տրվում է հոդվածի վերջում՝ այբենական կարգով:

Հեղինակը պատասխանատվություն է կրում իր ներկայացրած տեղեկությունների համար: Հրապարակվող նյութերը պետք է գրախոսվեն և երաշխավորված լինեն տպագրության համապատասխան ամբիոնների կողմից. բոլոր կարծիքները, երաշխավորագրերը պահպանվում են խմբագրությունում: Հրապարակվող նյութերի բնագրերը չեն վերադարձվում:

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղում:

Գրականության ցանկում ընդգրկված աղբյուրների մուշ

1. Աբրահամյան Ս. Գ. Հայերենի կետադրություն, Երևան, 1999:
2. Austin J. L. How to do things with words. Oxford: Oxford University Press, 1962.
3. Langacker R.W. Foundations of cognitive grammar // *Theoretical prerequisites*, v. 1. Stanford: Stanford University Press, 1987.
4. Гинзбург Р. С. О взаимосвязи лингвистического и экстралингвистического в лексике // *Иностр. языки в школе*, 1972, № 5.
5. Иванов В. И. Язык, текст, речь // Электронный ресурс: <http://www.textum.ru/article/ivan/html>

Խմբագրության հասցեն. Երևան 0025, Ալ. Մանուկյան 1
Адрес редакции: Ереван, ул. Ал. Манукяна 1
Էլ. փոստ՝ englishdep2@ysu.am

Հանձնվել է տպագրության 20.11.2015թ.

Թուղթը՝ օֆսետ: Չափսը՝ 84x100¹/₁₆

Տպագրական 21.5 մամուլ:

Տպաքանակը՝ 100: